

Մարզպետ Սարգիս Սահակյանը քաղաքացիների ընդունելություն կատարեց Արագածի տարածաշրջանում 28.03.2014



Մարտի 28-ին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը Ծաղկահովիտի համայնքապետարանում կազմակերպեց քաղաքացիների ընդունելություն, որին մասնակցեցին Արագածի տարածաշրջանի բնակիչները:

Մինչ ընդունելությունը սկսելը, Սարգիս Սահակյանը հանդիպեց համայնքապետերի հետ: Ըննարկվեցին գարնան գյուղատնտեսական աշխատանքներին ընթացքին, ինչպես նաև համայնքներում իրականացվող ծրագրերին վերաբերող մի շարք հարցեր:

Ընդունելության ժամանակ, ընդհանուր առմամբ, բարձրացվեց ավելի քան 50 հարց:

Քաղաքացիները մարզպետին դիմեցին ոչ միայն դրամական աջակցության, այլև՝ բժշկական օգնության, բնակարանաշինության, սոցիալական ապահովության, առողջարանային ուղեգրերի եւ այլ հարցերով: Բոլոր դիմումատուների հարցադրումներն էլ, մեծամասամբ, բավարարվեցին: Կատարվեցին անհրաժեշտ պարզաբանումներ եւ իրավասու պատասխանատուներին տրվեցին համապատասխան հանձնարարություններ:

Այսպիսով, մարզպետը առաջին եռամսյակի ընթացքում քաղաքացիների ընդունելություն կատարեց մարզի բոլոր տարածաշրջաններում: